ՀԵՌԱԳԻՐ

ԽՍՀՄ պրեզիդենտ՝ Մ. Գորբաչովին,
Միջհանրապետական տնտեսական կոմիտէի նախագահ՝ Ի. Սիլայեւին,
ՌԽՖՍՀ պրեզիդենտ՝ Բ. Ելցինին,
Ղազախստանի պրեզիդենտ՝ Ն. Նազարբայեւին,
ԽՍՀՄ Պետական Խորհրդի անդամներ՝
Ս. Շուշկեւիչին,
Ա. Ակայեւին, Ս. Նիյազովին,
Մ. Սեեզուրին, Ի. Կարիմովին,
Ա. Իսկանդարովին, Լ. Կրավչուկին

Վերջին ժամանակներս Ադրբեջանում քաղաքական իրավիճակի սրման կապակցութեամբ, այդ հանրապետութեան տարբեր ուժեր մըրցակցում են միմիանց հետ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հայ բնակչութեան դէմ եւ Հայաստանի սահմանամերձ տարածքներում ագրեսիվ գործողութիւնների վերաբերեալ առաջարկներով։

Ակնյայտ է դարձել նաեւ, որ Ադրբեջանի ներկայիս քաղաքական ղեկավարութիւնը ձգտելով ամեն կերպ պահպանել իշխանութիւնը, չնայած իր իսկ կողմից ստորագրուած Ժելեզնովոդսկի կոմիւնիկէին, դիմում է ցանկացած միջոցի։ Նպատակն այն է, որ զնալով ուժգնացող հակահայկական գործողութիւններով «արդարանայ» հանրապետութեան բնակչութեան առջեւ։ Այդ են վկայում Ադրբեջանի Գերագոյն Խորհրդի եւ ղեկավարութեան յայտարարութիւնները, ինչպէս նաեւ զինուած ուժերի ըս-

Շար. էջ 15 →

ՀԵՌԱԳԻՐ

— Սկիզբը՝ էջ 1

տեղծման նպատակով արուող որոշակի քայլերը, եւ Ադրբեջանի տարածքում գտնուող զինուորական ստորաբաժանումների ռազմական տեխնիկայի կազմակերպուած զավթումը։

Այս պահին ադրբեջանական զինուած կազմաւորումներ են կուտակում Լեռնային Ղարաբաղի շուրջը։

Ընդսմին, գործելակերպի հիմքում ընկած են կեղծիքը, սադրանքը, ինչպէս նաեւ այնպիսի յայտարարութիւններ, որոնց միջոցով Ադրբեջանի գործողութիւնները մատուցւում են իբրեւ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան «ագրեսիվ գործողութիւնների» դէմ ուղղուած պատասխան քայլեր։ Այսպես, սովորական է դարձել Հայաստանի ճանապարհների փակումը այն պատրուակով, թէ իբր մեր հանրապետութեան կողմից չի ապահովւում հաղորդակցութեան ուղիների անվտանգութիւնը։ Իբրեւ կանոն, կազմակերպւում է հրաձգութիւն, կատարւում են գործողութիւններ, որից յետոյ ձեռնամուխ են լինում լայնամասշտաբ շրջափակման։ Ադրբեջանի ղեկավարութիւնը չի խորշում ոչ մի սադրանքից. աւելին, կանգ չի առնում մինչեւ իսկ այնպիսի գործողութիւնների առջեւ, որոնք յանգեցնում են մարդկային զոհերի, այդ թվում եւ ադրբեջանական ազգութեան։ Բանն այնտեղ է հասել, որ զնդակոծուած հայկական սահմանամերձ գիւղերը ներկայացւում են իբրեւ ադրբեջանական։

Միայն այս տարի երկու անգամ լիովին շրջափակուել է երկաթուղին, պայթեցուել են էլեկտրահաղորդման գծերը, բազմիցս փակուել է գազամուղը, որի խողովակներից մէկը պայթեցուելուց յետոյ մինչեւ այժմ չի վերականգնուել։

Ի վերջոյ, Կիրանց (Հայաստան) եւ Խրիմլու (Ադրբեջան) գիւղերի միջեւ բախման պատրուակով Նոյեմբերի 4-ին, ժամը 20-ն անց 30 րոպէին անջատուել է Հայաստան եկող գազը։

Հայաստանի ղեկավարութիւնը պաշտօնապէս յայտարարում է, որ տուեալ դէպքում Հայաստանի կողմից պատասխան կրակ է բացուել այն բանից յետոյ, երբ ադրբեջանական զինուած ջոկատները խուժել են հանրապետութեան տարածք եւ փորձել են շրջապատել ու ոչնչացնել գիւղը։ Հետեւաբար, ադրբեջանական կողմից մարդկային զոհերը, եթէ անգամ այդպիսիք եղել են, հերթական սադրանքի արդիւնք են։

Գազամուղը փակելու, ինչպէս նաեւ դրան նախորդած 42օրեայ երկաթուղային շրջափակման հետեւանքով, հանրապետութիւնը յայտնուել է ամենադժնդ էներգետիկ ճգնաժամի մեջ։ Իրենց կարողութիւնների 50 տոկոս բեռնուածութեամբ աշխատելու դէպքում էլեկտրակայանների համար միայն 1,5-2 օրուայ վառելանիւթ կայ։

Հանրապետութեան շատ շրջաններում ձիւն է տեղացել, անսովոր ցրտեր են երկրաշարժի զօտում, լիովին կանգ է առել ողջ արդիւնաբերութիւնը, դադարեցւում է բնակչութեան էլեկտրամատակարարումը։

Ակնյայտ է նաեւ, որ այդ քայլը Ադրբեջանին հարկաւոր է Լեռնային Ղարաբաղում զանգուածային գործողութիւններ սկսելու համար։

Այսպէս շարունակուել չի կարող, այս ամենը կը յանգեցնի անկանխատեսելի հետեւանքների։

Իր պատրաստակամութիւնը յայտնելով **բոլոր** հարցերը լուծել Ժենեւեզնովոդսկում ստորագրուած կոմիւնիկէի ոգուն համապատասխան բանակցութիւնների միջոցով, Հայաստանի Հանրապետութեան ղեկավարութիւնը յամառօրէն պնդում է, որ տնտեսական ընկերակցութեան պայմանագիրն ստորագրած հանրապետութիւնները քաղաքական եւ տնտեսական պատժամիջոցներ կիրառեն Ադրբեջանի նկատմամբ։

Հայաստանի ղեկավարութիւնը դիմում է նաեւ միւս բոլոր հանրապետութիւններին եւ պետութիւններին՝ միջազգային իրաւունքի նորմերին համապատասխան պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանական Հանրապետութեան նկատմամբ։

Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեան

Հայաստանի Հանրապետութեան Նախարարների Խորհրդի նախագահի պաշտօնակատար՝ Հրանտ Բագրատեան

Հեռագիր ուղարկելու փոխարէն ճիշտ կը լինէր Մոսկուայում ներկայ լինել Պետխորհրդի Նոյեմբերի 4ի նիստին եւ այնտեղ բարձրացնել թարկուած խնդիրները։ Սակայն հէնց նոյն օրը խորհրդարանում քննարկւում էր քաղաքականութիւնը որոշելու իրաւունքը Գերագոյն Խորհրդի՞ն, թէ՞ նախագահին վերապահելու վերաբերեալ հարցը։

Եւ նախագահը գերադասեց լինել Երեւանում։